

դիրք կը գրաւեն արդէն քիւրդ ժողովրդի մէջ՝ և իրենց ձայնը որոշ նշանակութիւն կ'ստանայ քիւրդ ժողովրդի աշխարհիկ գործերուն մէջ։ Շէյխութիւնը շատ անգամ իբրև ուժ կանգնած կը մնայ քիւրդ ցեղապետներու հանդէպ. և կրօնապետներն ու ցեղապետները կը մնան հակառակ դէրքերու ու պատնէշներու վրայ. թէև երբեմն ալ կը համագործակցին քիւրդ ցեղերը վարելու գործին մէջ։

Չորրորդ շրջանը կրօնա-քաղաքական շրջանն է, ուր Օսմ. կառավարութիւնը նկատի ունենալով շէյխերու ազդեցիկ դիրքը, զանոնք ձեռք կ'առնէ, բարոյապէս և քաղաքականապէս քիւրդերը ի պաշտօնէ վարելու համար։ Այս շրջանին մէջ տեղի կ'ունենայ այն կարևոր փոփոխութիւնը, որ Շէյխային կրօնա-իշխանապետական ցեղային կերպարանը կը փոխուի թիւրք կառավարական կրօնա-քաղաքական վարչականութեան։

Մենք զանց կ'առնենք իրողութիւններ առաջ բերել մամրամանօրէն իբր ասպացոյց. բաւական է միայն որ այժմ ևս աչքի առաջ ունենանք Արարիան, Քօլէյթը, հայաբնակ գաւառներու շէյխերէն, ձէլալէտտինը, շէյխ Յէհիմը, շէյխ Ուպէյտուլլահը և այլն։

Ուրեմն այժմ թիւրքիայի քաղաքական կեանքի մէջ քիւրդ ցեղապետներու կողքին կանգնած կը գտնենք և քիւրդ շէյխը՝ հաւասար գծերու վրայ։

Աւելորդ կը համարենք յիշատակել թէ, Օսմ. կառավարութիւնը, որչափ որ զօրացուցեր է շէյխային կրօնա-քաղաքական իշխանութիւնը<sup>(\*)</sup>, բայց նախելով իր քաղաքական հանգամանքներուն՝ երբեմն ևս աշխատել է կռուել այդ սխառէմի դէմ՝ նկատելով այն վնասակար՝ կառավարական ուժեղ կազմի մը համար։

---

(\*) Տեսնել «Շէյխ Ուպէյտուլլահ իբր քաղաքական գործիչ» հատուածին մէջ։